

Համարը N 534-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2006.12.01/28(237) Հոդ.422
Ընդունող մարմինը Առողջապահության նախարար
Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 11.12.2006

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 17.05.2006
Ստորագրման ամսաթիվը 17.05.2006
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ «ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2-III-2.2.4 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
20 նոյեմբերի 2006 թ.
Պետական գրանցման թիվ 10006388

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

17 մայիսի 2006 թ.
ք. Երևան

N 534-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2-III-2.2.4 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2002 թ. օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը և դրա ենթակայության մարմինները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1316-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կանոնադրության կետ 7-ի «ե» ենթակետի, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման նպատակով, ելնելով բնակչության առողջության պահպանման շահերից կողմնակազմների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները սահմանելու նպատակով.

Հրամայում եմ՝

Հաստատել «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը (հավելված):

Նախարար

Ն. Դավիդյան

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ առողջապահության նախարարության

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ԵՎ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՓԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ N 2-III-2.2.4

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1 Սույն պետական սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի (այսուհետ՝ սանիտարական կանոններ) պահանջները տարածվում են ինչպես նոր կառուցվող, վերակառուցվող, այնպես էլ գործող սպորտային և առողջարարական նշանակության լողավազանների, այդ թվում՝ բացօթյա լողավազանների, դպրոցական և նախադպրոցական կազմակերպությունների, առողջարարական հիմնարկների, բաղնիքային համալիրների (սաունաների) կազմում գործող լողավազանների վրա: Լողավազանների կազմում ընդգրկված սենքերին (հանդերձարան, ցնցուղարան, ավազան, սանհանգույց և այլն) ներկայացվող հիգիենիկ պահանջները տարածվում են նաև այլ հասարակական շինությունների կազմում (բաղնիքներ, սաունաներ, սպորտային դահլիճներ և այլն) շահագործվող համանման սենքերի, այդ թվում՝ և սաունաների հովացնող ավազանների վրա:

1.2 Սույն սանիտարական կանոնները նախատեսված են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք իրականացնում են լողավազանների, բաղնիքային համալիրների (սաունաների) նախագծում, շինարարություն, վերակառուցում և շահագործում:

1.3 Սանիտարական կանոնները չեն տարածվում բժշկական նշանակության ավազանների վրա, որտեղ իրականացվում են բուժական միջամտություններ կամ պահանջվում է հատուկ հանքային կազմով ջուր:

1.4 Սույն սանիտարական կանոնների պահանջների իրականացումը ապահովում է ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակարուսային հիվանդությունների նկատմամբ համաճարակային անվտանգությունը և կանխում է մարդու օրգանիզմի վրա ջրի քիմիական բաղադրության վնասակար ազդեցության հնարավորությունը:

II. ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.1 Լողավազանների, բաղնիքների ավազանների թույլատրելի միանվագ ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է հաշվի առնելով 1 մարդուն անհրաժեշտ ջրի հայելու հավելված 1.1-ում բերված նորմատիվ պահանջները:

2.2 Լողավազանի, բաղնիքի հիմնական սենքերի ներքին հատակագծումը պետք է համապատասխանի հոսքայնության հիգիենիկ սկզբունքին՝ ապահովելով լողացողների շարժման հետևյալ ուղղությունը. նախասրահ, վերնահագուստի հանդերձարան, զգեստարան, ցնցուղարան, ավազան:

2.3 Նախասրահի, վերնահագուստի հանդերձարանի և զգեստարանի մակերեսները պետք է համապատասխանեն հավելված 1.2-ում բերված նորմերին:

2.4 Ցնցուղարանները պետք է տեղակայվեն զգեստարանից դեպի ավազան տանող ուղու անցումային մասում, 3 հոգու համար՝ 1 ցնցուղի հաշվարկից ելնելով:

2.5 Եթե առկա է անմիջական մուտք ցնցուղարանից դեպի ավազան, ապա նախքան ավազանը պետք է տեղակայվի հոսող, վարակազերծված ջրով ոտքերի լվացման ավազան:

2.6 Լողավազանների, բաղնիքների զգեստարաններին կից նախատեսվող սանհանգույցների և նրանցում տեղադրված սարքավորումների քանակը բերված է աղյուսակ 1.3-ում:

2.7 Ավազանի ջրի վերին աղտոտված շերտի հեռացման համար ավազանի պատերին նախատեսվում են ջրահեռացման ջրհորդաններ:

2.8 Լողավազանի, բաղնիքի սենքերի և ավազանի պատերի, հատակի կառուցվածքային և երեսպատման նյութերը պետք է լինեն չքայքայվող, ջրադիմացկուն, մակերեսները լինեն հարթ, հեշտությամբ լվացվող և ախտահանվող, իսկ օգտագործվող ռեազենտները, ախտահանիչ նյութերը պետք է լինեն սահմանված կարգով գրանցված և թույլատրված (այդ թվում՝ և հավելված 1.7-ի ցանկում նշված վարակազերծող միջոցները):

2.9 Սպորտային և առողջարարական լողավազանների սենքերի ցանկում նախատեսվում է բժշկի աշխատասենյակ, լաբորատորիայի սենքեր՝ մանրէաբանական և սանիտարաքիմիական հետազոտությունների համար: Արտադրական լաբորատորիայի բացակայության դեպքում հետազոտությունները կարող են կատարվել պայմանագրային կարգով՝ համապատասխան հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող այլ կազմակերպությունների լաբորատորիաների

կողմից:

2.10 Լողավազանները պետք է ապահովված լինեն ավազանի ջրափոխանակության համակարգով (հետշրջանառության, հոսքային, ջրի պարբերաբար փոխումով):

2.11. Ավազանի ջրի մաքրման, վարակազերծման և բաշխման կառույցները կարող են տեղակայվել հիմնական կամ առանձին շինությունում:

2.12 Օգոնատորային սարքավորումը պետք է ունենա դեգազատոր (օգոնաօդային խառնուրդից օգոնի հեռացման համար), ինչպես նաև խառնման խուց՝ ջրի և օգոնի կոնտակտի համար:

2.13 Ախտահանիչ և կոագուլացնող նյութերի, լուծույթների պատրաստման և պահպանման սենքերի վերևում չի թույլատրվում տեղակայել սանհանգույցներ և ցնցուղարաններ:

2.14 Ավազան ջուր մատակարարող համակարգը պետք է ապահովի ջրի հավասարաչափ բաշխումը ավազանի ամբողջ ծավալով՝ ախտահանիչ նյութերի կոնցենտրացիան և ջրի ջերմաստիճանի կայունությունը պահպանելու համար:

III. ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ, ՕԴԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ, ՋԵՌՈՒՑՄԱՆԸ, ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻՆ ԵՎ ԱՂՄՈՒԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ

3.1 Լողավազանի ավազանի, դահլիճի, քլորացման և օգոնացման սենքերի, բաղնիքների սենքերի համար անհրաժեշտ է նախատեսել ինքնուրույն ներհոս և արտաձիգ օդափոխիչ համակարգեր: Քլորացման և օգոնացման սենքերի կառավարման վահանակը տեղակայվում է նշված սենքերից դուրս:

3.2 Լողավազանների, բաղնիքների սենքերի ջեռուցումը և օդափոխությունը պետք է իրականացվի ՀՀՇՆ IV-12.02.01-2000 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Ջեռուցման, օդափոխության և օդի լավորակման համակարգերը պետք է ապահովեն սենքերի օդային միջավայրին և միկրոկլիմային ներկայացվող հիգիենիկ պահանջների պահպանումը (հավելված 1.4):

Բաց լողավազաններում ջրի ջերմաստիճանն ամռանը պետք է պահպանվի 27°C, ձմռանը՝ 28°C, իսկ լողալ սովորողների համար՝ 29°C:

3.3 Լողավազանի, բաղնիքի սենքերի լուսավորությունը պետք է ապահովվի ՀՀ ՇՆ II-8.03-96 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

3.4 Սենքերում, կառուցապատման տարածքներում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի «Աղմուկն աշխատատեղերում բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջներին:

3.5 Օդափոխության սարքավորումները տեղադրվում են աղմուկը և ցնցումը նվազեցնող սարքավորումներով ապահովված օդափոխիչ խցիկներում:

IV. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆԸ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ

4.1 Լողավազանների, բաղնիքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցվածքը պետք է ապահովվի N 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», N 2.04.02-84 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ» և N 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՍՆԻՊ-ների, ինչպես նաև սույն սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան:

4.2 Ջրի պահուստային տարողություններին և ավազանին մատակարարվող ջրի որակի նկատմամբ սահմանվում է հսկողություն՝ համաձայն «Խմելու ջուր. Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ. Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջների:

4.3 Շահագործման ընթացքում ավազանի ջրի որակը պետք է համապատասխանի հավելված 1.5-ում նշված ցուցանիշներին և նորմերին:

4.4 Եթե ընդհանուր մնացորդային քլորի խտությունը 0.8-1.2 մգ/լ է, ապա թույլատրվում է, որ ազատ մնացորդային քլորի կոնցենտրացիան լինի 0.3 մգ/լ-ից պակաս:

1-6 տարեկան երեխաների համար նախատեսված լողավազանում ազատ մնացորդային քլորի կոնցենտրացիան թույլատրվում է 0.1-0.3 մգ/լ, 100 մլ ջրում կոլիֆագեր չհայտնաբերելու պայմանով:

Ջուրը քլորով (զիշերը) և օզոնով (ցերեկը) հաջորդական ախտահանման ժամանակ, քլորի մնացորդային

կոնցենտրացիան պետք է լինի ոչ պակաս 0.4 մգ/լ, իսկ օգոնինը՝ ոչ պակաս, քան 0.1 մգ/լ:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման և քլորացման միաժամանակյա օգտագործման դեպքում ընդհանուր մնացորդային քլորի կոնցենտրացիան կարող է իջեցվել մինչև 0.3 մգ/լ:

Ջրի ախտահանումը կերակրի աղը էլեկտրոլիզի ենթարկելու միջոցով, ստացված նատրիում հիպոքլորիդով իրականացնելու դեպքում, թույլատրվում է քլորիդների կոնցենտրացիայի ավելացում մինչև 700 մգ/լ:

V. ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԻՆ ԵՆԴԿԱՑԱՑՎՈՂ ՀԻՔԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ

5.1 Սույն կանոնների պահանջներին համապատասխան (հավելված 1.5)՝ ավազանների ջրի որակ ապահովելու համար անհրաժեշտ է ավազանի ջրի թարմացում ջրափոխանակության միջոցով:

5.2 Ավազանը պետք է լցվի մինչև արտահոսքի ջրհորդանի եզրը:

5.3 Ավազանի ջրի վարակազերծումը պարտադիր է:

5.3.1. Որպես ջրի վարակազերծման հիմնական մեթոդներ կարող են օգտագործվել քլորացումը, բրոմացումը, օզոնացումը, ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթումը 16 մՋ/ամ²-ից ոչ պակաս չափաքանակից, անկախ սարքավորման տեսակից:

5.3.2. Վարակազերծման հուսալիության բարձրացման համար նպատակահարմար է քիմիական մեթոդները համակցել ուլտրամանուշակագույն ճառագայթման հետ:

5.3.3. Վարակազերծման այլ մեթոդների օգտագործման դեպքում, դրանց հուսալիությունը և անվտանգությունը պետք է հիմնավորվի տեխնոլոգիական և հիգիենիկ հետազոտություններով:

5.3.4. Ջրի վարակազերծող ռեագենտը տրվում է հոսքային համակարգի դեպքում՝ ջուր մատակարարող խողովակի մեջ, հետջրջանառության դեպքում՝ նախքան ֆիլտրերը, օգոնով և ՈՒՄ-ճառագայթման դեպքում՝ ֆիլտրերից հետո: Վարակազերծող ռեագենտի աշխատանքային չափաքանակը որոշվում է փորձնական ճանապարհով՝ դրա կոնցենտրացիայի (հավելված 1.7) մշտական ապահովման հաշվարկի հիման վրա:

5.6 Լողավազանների, բաղնիքների սենքերի և ավազանի մաքրմանը, ախտահանմանը ներկայացվող պահանջներ.

5.6.1. Սենքերի ամենօրյա մաքրումը և ախտահանումը պետք է իրականացվի աշխատանքային օրվա ընթացքում և վերջում: Ախտահանման պարտադիր ենթակա են սանհանգույցները, ցնցողարանը, զգեստարանը, հանդերձարանը, ավազանի սենքերը, շրջանցման ուղիները, նստարանները, դռների բռնակները:

5.6.2. Ավազանի ջուրը դատարկելուց և մեխանիկական մաքրումից հետո ավազանի ախտահանումը կատարվում է 100 մգ/լ կոնցենտրացիայով ակտիվ քլոր պարունակող լուծույթով կրկնակի ռոտացման միջոցով, 0,6-0,8 լ/մ² քանակությամբ քլոր պարունակող ախտահանիչ լուծույթի հաշվարկով:

Ախտահանիչ լուծույթի ոդոդումը և հեռացումը կատարվում է տաք ջրով՝ մշակումից 1 ժամ հետո: Ավազանի ջրում կապտաթարախային ցուպիկի հայտնաբերման դեպքում ավազանը մշակվում է 10%-անոց բորաթթվի լուծույթով՝ 2 ժամ տևողությամբ:

5.7 Լողորդների շնչառական գոտու օդում պարունակվող ազատ քլորի կոնցենտրացիան չպետք է գերազանցի 0,1 մգ/մ³, օգոնի կոնցենտրացիան՝ 0,16 մգ/մ³:

5.8 Ավազանի (հատկապես բաց լողավազանների) պատերի մամռապատման, ծաղկման դեմ պայքարելու և մաքրումը հեշտացնելու համար ավազանի ջրին կարելի է պարբերաբար ավելացնել պղնձաթջասայի (պղնձի սուլֆատի) լուծույթ՝ 1,0-5,0մգ/լ կոնցենտրացիայով կամ այլ թույլատրված ռեագենտներ՝ հաշվի առնելով սույն կանոնների 2.8 կետը:

5.9 Լողավազանի, բաղնիքի աշխատակազմը (մարզիչներ, լողի հրահանգիչներ, պրոցեդուրաներ իրականացնող աշխատակիցներ, բաղնիսպաններ, քիսաչիներ) ենթարկվում են առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական

զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին»

թիվ 347-Ն որոշմամբ հաստատված կարգի:

5.10 Տվյալ բնակավայրում հավելված 1.6-ում նշված որևէ հիվանդության համաճարակային անբարենպաստ իրավիճակի առկայության դեպքում ՊՀՀ տեսչության տարածքային մարմինը նախագոյազացնում է լողավազանի ղեկավարությանը, որ տվյալ վարակիչ հիվանդության նկատմամբ համապատասխան հետազոտություններ չանցած և բուժկանխարգելիչ հաստատության կողմից առողջության մասին տեղեկանք չներկայացրած անձանց չթույլատրեն լողավազանից օգտվել: Անկախ համաճարակային իրավիճակից՝ լողավազան հաճախող նախադպրոցական և ցածր դպրոցական հասակի երեխաները պարտադիր պետք է հետազոտված լինեն էնտերոբիոզի նկատմամբ՝ եռամսյակը 1 անգամ հաճախականությամբ:

Անկախ համաճարակային իրավիճակից լողավազանի բուժշխատողի կողմից իրականացվում է ամենօրյա արտաքին զննություններ, միկոզի և այլ մաշկային վարակիչ հիվանդությունների ախտանիշներով անձանց լողավազանից օգտվելը չթույլատրելու համար:

5.11. Չի թույլատրվում լողավազանի (ինչպես նաև բաղնիքի) ցնցուղարան, ավազանի դահլիճ մտնել հագուստով, կոշիկներով, իսկ ավազան՝ առանց ցնցուղ ընդունելու:

5.12 Լողավազաններում, բաղնիքներում պետք է հաճախորդներին տրվեն միայն միանվագ օգտագործման հողաթափեր և անհատական օգտագործման, փաթեթավորված հիգիենիկ պարագաներ (օճառ, սպունգ, սպիտակեղեն և այլն): Տրվող սրբիչները, սպիտակեղենը պետք է լվացվեն կենտրոնացված լվացքատանը կամ պայմանագրային կարգով:

5.13 Հանդերձարանները պետք է ապահովված լինեն հագուստի անհատական պահարաններով, մեկ հերթափոխում թույլատրված հաճախորդների քանակությանը համապատասխան:

VI. ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

6.1 Լողավազանների շահագործման ընթացքում արտադրական հսկողություն է իրականացվում խմելու և ավազանի ջրի որակի, միկրոկլիմայի չափորոշիչների, օդափոխության էֆեկտիվության, ավազանի շնչառական գոտու օդի բաղադրության, լուսավորության, աղմուկի, ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի որոշման նպատակով՝ համաձայն արտադրական լաբորատոր-գործիքային հսկողության ծրագրի:

6.2 Բաղնիքներում արտադրական հսկողություն է իրականացվում խմելու և ավազանի ջրի որակի, միկրոկլիմայի չափորոշիչների, օդափոխության էֆեկտիվության, ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի որոշման նպատակով՝ համաձայն արտադրական լաբորատոր-գործիքային հսկողության ծրագրի:

6.3 Ավազանների (լողավազանների և սաունաների) ջրի որակի նկատմամբ արտադրական լաբորատոր հսկողությունը ներառում է ներքոհիշյալ ցուցանիշների որոշումը, նմուշառման հետևյալ հաճախականությամբ.

- հիմնական մանրէաբանական ցուցանիշներ (կոլիֆորմ մանրէներ, ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ, կոլիֆագեր և ոսկեգույն ստաֆիլակոկեր), ինչպես նաև ամոնիակի ազոտ, քլորիդներ և ջրի որակի բարելավման նպատակով օգտագործվող ռեագենտների մնացորդային քանակներ՝ 10 օրը 1 անգամ,

- մակարոնաբանական ցուցանիշներ՝ ամիսը 1 անգամ,

- զգայորոշման ցուցանիշներ (պղտորություն, գունավորում, հոտ), օրը 1 անգամ,

- վարակազերծող ռեագենտների (քլոր, բրոմ, օզոն) մնացորդային քանակություններ, 4 ժամը 1 անգամ:

6.4 Ավազանի ջրի հետազոտման համար նմուշառումը կատարվում է ավազանի ոչ պակաս, քան 2 կետում, ջրավազանի ծանծաղ և խոր մասերում ջրի հայելու մակերեսից 25-30 սմ խորության վրա, ինչպես նաև ֆիլտրերից առաջ և հետո (հետջրջանառության համակարգի առկայության դեպքում) և ավազան մտնող ջրից:

6.5 Հաշվի առնելով ջրի քլորացման ժամանակ հալոգեն օրգանական (հալոֆորմ) միացությունների, իսկ օզոնացման ժամանակ՝ կարբոնիլային միացությունների (ալդեհիդներ) առաջանալու հնարավորությունը, անհրաժեշտ է ոչ պակաս, քան ամիսը 1 անգամ որոշել քլորոֆորմի (քլորացման դեպքում), կամ ֆորմալդեհիդի (օզոնացման դեպքում) մակարդակները: Այն դեպքում, երբ նշված միացությունների քանակը մշտապես գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, անհրաժեշտ է

օգտագործել ջրի վարակազերծման այլընտրանքային եղանակներ (ուլտրամանուշակագույն ճառագայթում կամ այլ):

6.6 Լողավազանների, բաղնիքների սենքերի միկրոկլիմայի արտադրական հսկողությունը պետք է ապահովվի 4 ժամը 1 անգամ, իսկ լողորդների շնչառական գոտու օդում 5.7 կետում նշված նյութերի կոնցենտրացիաների, աղմուկի, ներհոս-արտաձիգ օդափոխանակության համակարգի էֆեկտիվության որոշման արտադրական հսկողությունը՝ տարին 1 անգամ հաճախականությամբ:

6.7 Ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի արտադրական հսկողության (կոլիֆորմ մանրէների, ախտածին միաբջջիների ցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների հայտնաբերման նպատակով) մանրէաբանական և մակարոնաբանական հետազոտությունների համար լվացուկները վերցվում են լողավազանի, բաղնիքի ավազանի բազրիքի, զգեստարանների նստարանների, ցնցուղարանի հատակի, պատերի, զգեստարանի, սանհանգույցի և ցնցուղարանի դռների բռնակների և այլ ախտահանվող մակերեսներից՝ ամիսը 1 անգամ հաճախականությամբ:

6.8 Արտադրական լաբորատոր հսկողության ժամանակ ավազանի ջրի և լվացուկների հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում անհրաժեշտ է տեղյակ պահել Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններին:

6.9 Միաժամանակ անմիջապես ձեռնարկվում են միջոցառումներ՝ ֆիլտրերի մաքրում, վարակազերծող ռեագենտի մնացորդային քանակի ավելացում, սենքերի ու գույքի հիմնական մաքրում և ախտահանում, տրվող թարմ ջրի ծավալի ավելացում և այլն:

6.10 Միջոցառումները ձեռնարկելուց հետո կատարվում են ջրի մանրէաբանական հետազոտություններ՝ ընդգրկելով լրացուցիչ ցուցանիշները (հավելված 1.5) և ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի հսկողության նպատակով վերցրած լվացուկների կրկնակի հետազոտություն:

6.11 Լրացուցիչ մանրէաբանական և մակարոնաբանական հետազոտությունների արդյունքում շեղումների արձանագրման դեպքում լողավազանի, բաղնիքի շահագործումը պետք է ժամանակավորապես դադարեցվի: Անհրաժեշտ է ավազանի ջուրը դատարկել, ավազանը և սենքերը ենթարկել հիմնական մաքրման և ախտահանման, ջրի և լվացուկների հետագա մանրէաբանական և մակարոնաբանական հետազոտությամբ:

6.12 Ավազանի ջրում մակարոնային հիվանդությունների հարուցիչներ հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է սպասարկող անձնակազմին և մշտական հաճախորդներին հետազոտել հելմինթների ձվիկների և աղիքային միաբջջիների ցիստերի նկատմամբ:

6.13 Ավազանի շահագործումը (աշխատանքների վերսկսումը) իրականացվում է լաբորատոր հետազոտությունների արդյունքները սույն կանոնների պահանջներին համապատասխանության դեպքում:

Հավելված 1.1.

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԻԱՆՎԱԳ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

<i>Լողավազանների տեսակը</i>	1 մարդուն անհրաժեշտ ջրի հայելու նորմատիվ մակերեսը, մ²
Սպորտային լողավազաններ	8-10
Այլ տեսակի լողավազաններ	
Մեծահասակների լողավազաններ	5,0-8,0
Երեխաների լողավազաններ	4,0- 5,0
Բաղնիքների և սաունաների հովացնող ավազաններ	2,0

Հավելված 1.2.

ՕԺԱՆՂԱԿ ՄԵՆՔԵՐԻ ՄԱԿԵՐԵՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ

<i>Մենք</i>	<i>Պարապողների թիվը հերթափոխում</i>	<i>Մակերես</i>
Նախասրահ	1 (մինչև 40 պարապողի դեպքում)	0.5 մ², բայց ոչ պակաս, քան 10 մ²

	1 (40-ից ավելի պարապողի դեպքում)	0.5 մ ² , բայց ոչ պակաս, քան 20 մ ²
Վերնահագուստի հանդերձարան (պարապողների և հանդիսատեսի)	1	0.1մ ² , բայց ոչ պակաս, քան 10 մ ²
Զգեստարան	1	2.1 - 2.5 մ ²
	1 (երեխաների համար)	2.9 մ ²

Հավելված 1.3.

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԶԳԵՍՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

<i>Մանհանգույցներ</i>	<i>Մարքավորումներ</i>
Տղամարդկանց	1 զուգարանակոնք և 1 պիսուար 45 հոգու համար
Կանանց	1 զուգարանակոնք 1 հերթափոխում 30 հոգու համար

Հավելված 1.4.

ՓԱԿ ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՍԵՆՔԵՐԻ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ

<i>Սենքի նշանակություն</i>	<i>Ջրի ջերմաստիճանը՝C</i>	<i>Օդի ջերմաստիճան՝C</i>	<i>Հարաբերական խոնավություն %</i>	<i>1 ժամում օդափոխանակության չափանիշներ</i>		<i>Օդի շարժման արագություն մ/վրկ</i>
				<i>ներիս</i>	<i>արտաձիգ</i>	
Մեծերի ավազան	24-26	-	-	-	-	-
Երեխաների ավազան	30	-	-	-	-	-
Լողավազանի ավազանի դահլիճներ	-	ջրի ջերմաստիճանից 1-2 ⁰ բարձր	ոչ ավելի 60%	1 պարապողին ոչ պակաս 80մ ³ /ժամ և 1 հանդիսատեսին ոչ պակաս 20մ ³ /ժամ		ոչ ավելի 0.5
Պարապուրներին նախապատրաստական դահլիճներ	-	18	չի նորմավորվում	1 պարապողին ոչ պակաս 80մ ³ /ժամ		ոչ ավելի 0.2
Զգեստարաններ	-	25	չի նորմավորվում	1 ժամում օդափոխանակության բազմապատկություն		չի նորմավորվում
				հաշվեկշռով հաշված ցնցուղներ	2 (լողարաններից)	
Ցնցուղարաններ	-	25	չի նորմավորվում	5	10	չի նորմավորվում
Մերսման սենքեր	-	22	չի նորմավորվում	4	5	չի նորմավորվում
Սաունայի խցիկ	-	ոչ ավելի 120	չի նորմավորվում	-	5 (պարբերական գործունեության մարդկանց բացակայության պայմաններում)	չի նորմավորվում
Ջրի հետազոտության լաբորատորիա	-	18	չի նորմավորվում	2	3	չի նորմավորվում

Հավելված 1.5.

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ

<i>Ցուցանիշներ</i>	<i>Նորմեր</i>
Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ	
Պղտորություն, մգ/լ, ոչ ավելի	2
Գունավորում, աստիճաններով, ոչ ավելի	20
Հոտ, բալերով, ոչ ավելի	3
Ամոնիակային ազոտ	0,05 մգ/լ ոչ ավելի
Քլորիդներ	ոչ ավելի, քան 550 մգ/լ

Մնացորդային քլոր - ազատ	0.5-0,7 մգ/լ
Մնացորդային բրոմ	0.8-1.5 մգ/լ
Մնացորդային օզոն	ոչ պակաս 0.1 մգ/լ
Ֆորմալդեհիդ` օզոնացման դեպքում	ոչ ավելի, քան 0,05 մգ/լ
Քլորոֆորմ` քլորացման դեպքում	ոչ ավելի, քան 0,1 մգ/լ
Հիմնական մանրէաբանական և մակարուծաբանական ցուցանիշներ	
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 100 մլ-ում	1
Ջերմատուրանտ կոլիֆորմ մանրէներ 100 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Կոլիֆագեր 100 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Ոսկեգույն ստաֆիլակոկեր 100 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Ախտածին միաբջջյանների ցիստեր 50 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Հելմինթների ձվեր և թրթուրներ 50 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Մանրէաբանական լրացուցիչ ցուցանիշներ	
Վարակիչ հիվանդությունների հարուցիչներ 1000 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն
Կապտաթարախածին ցուպիկներ 50 մլ-ում	չպետք է հայտնաբերվեն

Հավելված 1.6.

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՋՐՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Հիվանդություններ</i>	<i>Ջրային գործոնի հետ կապի աստիճան</i>
1. Ադենավիրուսային ֆարինգո - կոնյունկտիվալ տենդ	+++
2. Վիրուսային հեպատիտ A	+++
3. Էպիդերմոֆիթիա (լողորդների քոս)	+++
4. Կոկսակի վարակ	++
5. Դիզենտերիա	++
6. Օտիտներ, սինուսիտներ, տոնզիլիտներ, կոնյունկտիվիտներ	++
7. Մաշկի տուբերկուլոզ	++
8. Մաշկի սնկային հիվանդություններ	++
9. Լեզիոնելլոզ	++
10. Ամեռային մենինգոէնցեֆալիտ	+
11. Պոլիոմիելիտ	+
12. Տրախոմա	+
13. Կոնտագիոզ մոլյուսկ.	+
14. Սուսանակային վուլվոլագինիտ	+
15. Ասկարիդոզ	+
16. Տրիխոցեֆալոզ	+
17. Էնտերոբիոզ	+
18. Լյամբլիոզ	++
19. Սուր սավոնելլոզային գաստրոէնտերիտներ	+

Ջրային գործոնի հետ կապը` +++ - բարձր, ++ - էական, + - հնարավոր է

Հավելված 1.7.

ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐ

1. Լողավազանների ջրի վարակազերծման համար

- գազային քլոր
- քլորակիր
- կալցիումի հիպոքլորիդի երկհիմնային աղ
- դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ
- տեխնիկական A մակնիշի նատրիումի հիպոքլորիդ
- լիթիումի հիպոքլորիդ
- դիքլորանտին
- դիբրոմանտին
- ակվատարս

2. Մենքերի և գույքի կանխարգելիչ ախտահանման (ջրային լուծույթներ) համար

- քլորակրի պարզեցված լուծույթ (0,2-0,3%)
- քլորամին (0,5%)
- նիրտան (3,0%)
- տեխնիկական A և B մակնիշի նատրիումի հիպոքլորիդ (0,1-0,2%)
- համակցություն. քլորդեզին (0,5%) և սուլֆոքլորանտին (0,2%)
- քլորդեզին (5,0%)

3. Ավազանի ջուրը դատարկելուց հետո ախտահանման համար

- քլորակիր (պարզեցված լուծույթ 1%)
- քլորդեզին (5%)
- նիրտան (3,0%)